

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 45/1**

**10 նոյեմբերի 2015 թ.**

Քննարկվեց «Էդգար Դանիելյան» ՍՊԸ 14.10.2015 թ-ի բողոքը ՀՀ ֆինանսների նախարարի ժ/պ 08.10.2015 թ-ի թիվ 003532 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 31.08.2015 թ-ի թիվ 5102025 հանձնարարագրի համաձայն «Էդգար Դանիելյան» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 02.10.2015 թ-ի թիվ 5102025 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ: Ակտի 1-ին կետով արձանագրված խախտումը հիմք է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարի ժ/պ 08.10.2015 թ-ի թիվ 003532 որոշման կայացման համար, որի համաձայն «Էդգար Դանիելյան» ՍՊԸ գործունեությունը 15.10.2015 թ-ից մինչև 15.10.2015 թ-ն ընկած ժամանակահատվածում ենթակա է կասեցման:

Նշվեց նաև, որ «Էդգար Դանիելյան» ՍՊԸ կողմից նաև հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 02.10.2015 թ-ի թիվ 5102025 ակտը վերացնելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 23.10.2015 թ-ի թիվ ՎԴ/5780/05/15 որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ»:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի և 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Էդգար Դանիելյան» ՍՊԸ 14.10.2015 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

«Էդգար Դանիելյան» ՍՊԸ 14.10.2015 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

